Կարգապահական գործ թիվ ԿԳ-19023

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի սեպտեմբերի 06-ի թիվ 209-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/131-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՌՈՒԲԵՆ ՉԻԲՈՒԽՉՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարապետ Աղաջանյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Աուստամյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրչյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի և Նելլի Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Ռուբեն Չիբուխչյանին (արտոնագիր՝ թիվ 760) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 06.03.2019թ. տրամադրված տեղեկանքի՝ փաստաբան Ռուբեն Չիբուխչյանն ունի 145.000 (մեկ հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ 2016թ. սեպտեմբերից 2019թ. հունվար (ներառյալ) ամիսներն ընկած ժամանակահատվածի համար անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

11.03.2019թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի թիվ 73-Ա/ԿԳ-19023 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Ռուբեն Չիբուխչյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ նաև Կանոնագիրք)** 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով:

Սույն կարգապահական գործը 15.03.2019թ. հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 11.06.2019 թ. ժամը 19:30-ին, 27.08.2019թ., ժամը՝ 19:34-ին և 06.09.2019թ., ժամը 18:31 ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբան Ռուբեն Չիբուխչյանը բացատրություն չի ներկայացրել:

Փաստաբանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Ռուբեն Չիբուխչյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 19.10.2007թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքով),
2) փաստաբան Ռուբեն Չիբուխչյանն ունի 145.000 (մեկ հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ 2016թ. սեպտեմբերից 2019թ. հունվար (ներառյալ) ամիսներն ընկած ժամանակահատվածի համար անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 06.03.2019թ. տրամադրված տեղեկանքով),
3) փաստաբան Ռուբեն Չիբուխչյանն իր անդամավճարի պարտքը մարել է մասնակի (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 06.09.2019թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Ռուբեն Չիբուխչյանի (արտոնագիր՝ 760, ստացված՝ 19.10.2007թ.) նկատմամբ 2013-2019թթ. ընկած ժամանակահատվածում անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով չորս անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (չհաշված սույն կարգապահական վարույթը): Անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով ավարտված կարգապահական վարույթներից երեքով ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Խորհրդի՝ 16.01.2015թ.-ի թիվ ԿԳ/5-Ա որոշմամբ անդամավճարի վճարման պարտականությունը չկատարելու համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողության ձևով: Տույժը մարվել է:

Խորհրդի՝ 16.10.2015թ.-ի թիվ ԿԳ/157-Ա որոշմամբ անդամավճարի վճարման պարտականությունը չկատարելու համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողության ձևով: Տույժը մարվել է:

Խորհրդի՝ 16.01.2017թ.-ի թիվ ԿԳ/8-Ա որոշմամբ անդամավճարի վճարման պարտականությունը չկատարելու համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողության ձևով: Տույժը մարվել է:

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Ռուբեն Չիբուխչյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ *փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի*

համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն Կանոնագրքի 2.9.1. կետի՝ *փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:*

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի **(այսուհետ նաև՝ Կարգ)** 7-րդ կետի՝ *փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է, որ ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:*

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանը ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Ռուբեն Չիբուխչյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 06.03.2019թ. տրամադրված տեղեկանքով: Ավելին՝ կարգապահական վարույթ հարուցելուց հետո էլ նա շարունակել է խախտել վերը նշված նորմերի պահանջները և կարգապահական վարույթը Խորհրդում լսվելու ժամանակ էլ վերը նշված խախտումն առկա էր:

Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում, որ Պատասխանողը նախկինում էլ չի կատարել անդամավճար վճարելու պարտականությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ սույն որոշումը կայացնելու դրությամբ մասնակի մարել է իր անդամավճարի պարտքը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, Կարգի 21-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Ռուբեն Չիբուխչյանին (արտոնագիր՝ թիվ 760) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1. ենթակետի պահանջների խախտման համար.

2. Փաստաբան Ռուբեն Չիբուխչյանի (արտոնագիր թիվ 760) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն.

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Ռուբեն Չիբուխչյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարապետ Աղաջանյան

06 սեպտեմբերի 2019թ.
թիվ ԿԳ/131-Ա
ք. Երևան